ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 3

2019թ. ապրիլի 9-ին տեղի ունեցավ Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոցի 1-ին <<Բ>> դասարանի հերթական ծնողական ժողովը: Ժողովին ներկա էին բոլոր ծնողները և տնօրենի մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալ Զոյա Գևորգյանը:

Օրակարգում՝

1. <<Հրաժեշտ այբբենարանին>> հանդեսի կազմակերպման հարցը:

Լսեցին.- <<Հրաժեշտ այբբենարանին>> հանդեսի կազմակերպման հարցը:

Դասվար Սարգսյանը շնորհավորեց ծնողներին իրենց երեխաների գրաճանաչ դառնալու կապակցությամբ, ուրախությամբ նշեց, որ բոլոր աշակերտներն էլ տառաճանաչ են, կարողանում են կարդալ, բայց նաև հայտնեց իր մտահոգությունը, որ նույնը չի կարող ասել գրաճանաչության մասին: Նա ասաց, որ կան աշակերտներ , որոնք չեն կարողանում թելադրություն գրել:

Հ. Սարգսյանն ասաց, որ հավատարիմ մնալով դպրոցի ավանդույթներին, դասարանում կազմակերպելու է միջոցառում նվիրված երեխաների տառաճանաչ և գրաճանաչ դառնալուն: Նա հատուկ շեշտեց, որ ոչ մի գումար չի հավաքելու բեմը կամ դասարանը զարդարելու համար, դպրոցում կան անհրաժեշտ բեմական հագուստները, բեմը զարդարելու համար իրեն կօգնեն Զոյա Գևորգյանը և Անժելա Գինոսյանը:

Որոշեցին.

1. Լինել հետևողական և ուշադիր, որպեսզի երեխաները չմոռանան ոչ մի տառի գրությունը:
2. Կանոնավոր երեխաներին ուղարկել դպրոց
3. Օգնել դասվարին միջոցառումը ժամանակին անցկացնելու համար:

Ժողովի նախագահ՝ Տ. Ազատյան

Քարտուղար՝ Ան. Շահինյան